
րում ընդհանուր դատականներին բաժանելու:

3) Հիւանդանոց բաց արաւ գաղթական հիւանդանոցներ համար, անդամներին 2 հոգի ծախարար ընտրեց, որպէս զի ամեն ինչ կանոնաւոր լինի, և ոչ թէ 94 թականի պէս մի քանի ծաղիկ կտորներով ու տիրացուներ ձեռքով (որոնք մինչև անգամ ընկերութեան անդամներ չէին) կատարեց ծախարարութիւնը:

4) Նոր վարչութիւնը որոշեց՝ ոչ որի ոչինչ չը տար, մինչև որ բոլոր անդամները կը ընեն և կը տեղեկանան, թէ ո՞վ ինչ կարիք ունի և ինչքան և ըստ այնմ կը լինի նպաստը, և ոչ թէ անցեալ տարիներէ պէս, երբ պ. կաճկաճեանը քէֆը ուժ ուզէր՝ նրան կը տար, առանց անդամներէ գիտութեան:

1889 թիւից սկսած մինչև 96 թիւը, պ. կաճկաճեան, ձեռք ներսէն ընկնելով և տիրել վարչութեան ամբողջ գործերուն: Դա արդէն պարզ երևում է արձանագրութիւններից և յիշած փաստներից: Բացի 96 թականից, վարչութեան գործի ամբողջ զեկը պ. կաճկաճեանի ձեռքումն է եղել միւս անդամների կաթիլն հակառակ հետեւեալ փառքն էլ ու նստուկն էլ պատկանում է միայն պ. կաճկաճեանին: Եւ եթէ ժամանակին գործը աւելի սուր կերպարանք ստանալու լինի, ևս այդ բոլորը կը հաստատւած թէ արձանագրւած և թէ չարձանագրւած փաստերով և այն ժամանակ անկել պարզ կը լինի ընկերացիներին, թէ տառնեակ տարիներ առաջ հասարակական գործի մէջ մտած՝ պ. կաճկաճեանն է հասարակական գործերին ճշմարիտ նախաձեռնողը, թէ նուազատ—«безъ разсужденія» ապարդ զուրս եկողը:

Մետրովը Ղազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքապետի պաշտօնակատարը փետրվարի 8-ին գիմեց Թիֆլիսի նահանգապետին ինդերնով որ թող տրվի քաղաքային վարչութեանը ի կատար ածել դումայի վճիռները, որոնք վերաբերում են ժամտախտի դէմ կուրելու նախադատարարական միջոցներին: Իր միջնորդութիւնը քաղաքապետի պաշտօնակատարը բացատրում է, ասելով, թէ ոչ միայն պէտք է ընտելանալ ան մաքրի, որ կարող է մեզ մօտ ժամտախտ երևալ, այլ և պէտք է անյապաղ ընդհանուր ասեղնադակ կատարել քաղաքում աչքի առաջ ունենալով: որ վերջերս տարածվել են սուր տարախտիկի հիւանդութիւններ, որոնք ժամտախտից պակաս վտանգաւոր չեն, այն է բըժաւոր տիֆ, զիֆալերիա և այլն:

Փետրվարի 8-ին, Կովկասեան զինուորական շտաբի շինութեան մէջ «Кавказъ» լրագրի խօսքով, տեղի ունեցաւ երկրորդ խորհրդակցութիւն՝ Կովկասի ժամտախտի դէմ պայքարելու միջոցների մասին: Խորհրդակցութիւնը տեղի ունեցաւ Կովկասի կառավարչապետի պաշտօնակատար իշխան Ամիրխանովի նախագահութեամբ, և ներկայութեամբ մի քանի գիտնականների, կառավարչապետի դեանատան ղերեկաւոր Միգելէիչի, Թիֆլիսի և Կարսի նահանգապետների, Թիֆլիսի փոխնահանգապետի, Մալինի, Գլավակի, Ումիսա և Գառնէլին բժշկապետների, և մի քանի ուրիշ անձանց:

Կիրակի, փետրվարի 9-ին, Թիֆլիսի արտիստական ընկերութեան ընթերցարանում փոխարինողներ խումբը ներկայացրեց յօդուտ «Վարժուհիների ընկերութեան» Նէմիթովիչ-Գանչենկոի նոր դրաման, «Пѣна Жизни» անունով: Այդ դրաման, որի մասին բաւական շատ խօսակցուում մամուլի մէջ, քարոզում է հետեւեալ բարոյական միտքը—կենտրոն մէջ պէտք է դրածալը ներման մեծ սկզբունքը, ներուժը, և ոչ պատիժը, կարող է ուղղել մարդկանց: Համեմատ այդ դաղափարի, Դոմիտի Դեմիտրի, որի կէնը—Աննա Վիկտորովնա, անհատաբար էր զբաղվել հոգեկան երկար կուրի յետոյ, ներում է յանցաւոր կնոջ և իրան դրանով աւելի երջանիկ է դրում, քան առաջ: Պիէսայի այդ երկու գլխաւոր դերերը մեծ աջողութեամբ կատարեցին պ. Վէյման և տիկին Պանկէվիչ: Ներկայացումը դրանք էր հասարակութեան մեծ բաղմունքներ:

Թիֆլիսի Ն. Աղամալեանց խնդրում է մեզ յայտ-

նել, որ «Մշակի» № 10-ի մէջ տպած լուրը բժիշկ Ա.—ի մասին, որը չէ ընդունել գաղթական հիւանդանոց, իրան չէ վերաբերում:

ԱՅՈՒՆԱՎԱՐԻՅՑ մեզ գրում են. «Քաղաքային աւագի ձեռքով սկսված հանգանակութիւնը ընդհատվեց կառավարչապետի չլրացրեալանի հիման վրա: Ընդամենը ժողովել է 711 րուբլի, որ և յանձնվեց գաւառապետին: Գաղթականներ ի օգտին ստորագրութիւն բացվել է գաւառական վարչութեան մէջ: առանձնապէս ոչ քիչ չեն գիմելու: Ուստի, ցանկալի է, որ ինքնաբերաբար գնան և գրվեն»:

ՎԵՐՆԱՎԱՐԻՅՑ մեզ գրում են փետրվարի 3-ին, «Այստեղ մեծ ձիւն է եկել և դեռ չարուհակում է երբեմն զալ: Դերերը պատմում են, որ այս տեսակ ձիւն 40—45 տարի առաջ են տեսել: Ձիւնը հաստ չերտով նստած է, և եղանակից ցրտովեան պատճառով չէ հալուում, ուստի եղջիւրաւոր անասունները մեծ նեղութիւն են կրում խոտի պակասութիւնից, որի դէմ շատ բարձրացել է. 4—5 կօպէկ արժեցող խոտի խորճը ներկայումս ծախվում է 10—12 կօպէկով: Յրտերը այս տարի հասան մինչև 140»:

ՄԱՆԱՎԱՐԻՅՑ մեզ գրում են. «Երեւոյթի, փետրվարի 4-ին, քաղաքային վարչութեան մէջ, գաւառապետի և նրա օգնականի ներկայութեամբ, մի ժողով կայացաւ, որտեղ ընկնեց այն հարցը, թէ ինչ նախապատրաստական միջոցներ պէտք է ձեռք առնել: Ժամտախտի դէմ աջողութեամբ կուրելու համար այն դէպքում, եթէ նա մուգը գործէ մեր երկիրը: Ժողովում միջոցներ անպայման մաքրութեան մէջ պահել քաղաքը, չինել տալ մի քանի տեղերում հասարակական արտաքիններ, ընտրել մի քանի սանիտարական հոգաբարձուներ, որոնք պէտք է հսկեն քաղաքի առողջապահական պայմանների վրա»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Համայնքն և երի ժողովուրդը: Այսօր Բարալէտ, որ այնքան ծիծաղալար լինում էր պաշտպանել է միտ Թիւրքիան հայերի դէմ, այժմ սկսել է նորից կատարել յոյների վերաբերումը: Այսօրվան համայնքների ժողովի փետրվարի 9-ի նիստում տեղի ունեցաւ հետեւեալ ընթացքը:

Կըրգօն (պատասխանելով Այմէտ Բարալէտին). Այդպիսի միւս պետութիւնների հետ միասին աշխատում են, առանց կրօնի և ցեղի խտրութեան՝ կարգ վերահաստատել կրեւելու: մուսուլմանների՝ զիւղերից փակելու պատճառը այն է, որ նրանք զիւղերում փոքրամասնութիւն են կազմում, իսկ քաղաքներում մեծամասնութիւն: Ոչ մի առիթ չը կայ նրանքիւր, որ մուսուլմանները աւելի են վնասվում, քան քրիստոնեաները:

Լօքեւ. ձիւն է, որ քրիստոնեաներն են ըսկսել յարձակումը:

Կըրգօն. Ոչ, պարսն, այդպիսի լուր չենք ստացել:

Սալիկեւսօն. Արդեօք Թիւրքիան իրագործել է պետութիւնների պահանջած բոլոր ընթացքները:

Կըրգօն. Այնքան է, որ ոչ մինչև այժմ ժամանակը անյարմար է եղել: Կօմիտէները կրեւելում չարունակում են ընթացքներ մտցնելու իրանց ջանքերը:

Այմէտ Բարալէտ նորից հարց է տալիս նորի իմաստով:

Կըրգօն կրկնում է, որ նա ոչ մի տեղեկութիւն չունի այն մասին, թէ նախ քրիստոնեաներն են յարձակում գործել:

Այմէտ Բարալէտ նորից վեր է կենում խօսելու:

Սալիկեւս. Կարգ, կարգ: Այդ հարցադրումը ոչ մի կայ չունի գործի հետ:

«Daily News» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հետազոտում է հետեւեալը: Անգլիական պարլամենտի մէջ արտասանված անդադատ կործինները Թիւրքի կերբի մասին Կ. Պոլսում ընդհանուր պախարակման նիւթարկեցին, որովհետեւ

ամենքը ճանաչում են Կերբի, իբրեւ անձուէր զօրի նախագահ Արթին-փաշա Տատեանի տան և եռանդուն գործողի: Կ. Պոլսի դեանագիտական շրջաններում այն կարծիքն է տիրում, որ վախենում է տանից զուրս գալ, և արդէն մի եթէ պետութիւնները լիազօրութիւն տային իր քանի օր է ներկայ չի լինում ժողովի արտաքին Կ. Պոլսի դեանագիտներին, գործերը աւելի շուտ և լաւ ընթացք կը ստանային:

Բէֆօրմների նոր ծրագրի առիթով նորի իսկ թրքում «Berliner Tageblatt» յայտնում է, որ թիւրքաց բարձր շրջաններում կատարեալ շիտաթիւն է տիրում: Չարագուշակ լուրեր են պատում: Ասում են, որինակ, որ անգլիական պատասխան ոչ հեռու ուղիներ են գտել և մի քանի կապաւորի անձինք կայանաւորվել են: Ասում են և այն, որ սուլթանը, իզգէթ ըէյի աղդեցութեան տակ, ընթացքները մերժելու որոշում է կայացրել: Բէֆօրմների ծրագրի մասին յայտնի է միայն, որ մեծ պետութիւնների դեսպանները մշակել են ընթացքները ամբողջ կայսրութեան համար: «Daily News» լրագրի թղթակից խօսքով, Կ. Պոլսի դեսպանները ձեռքով մշակված ընթացքների ծրագրերը չափազանց բարդ և ընդարձակ է: Նա մի տեսակ սահմանադրութիւն է օսմանեան կայսրութեան համար, որի հետ միասին կայ և մի շատ բարդ ֆինանսական ծրագիր: Այժմ ամբողջ հարցը նրա մէջն է, թէ արդեօք մեծ պետութիւնները հաւանութիւն կը տան այդ ծրագրին և սուլթանը կը կարողանայ իրագործել այդ ծրագրերը, եթէ ընդունի:

Կ. Պոլսից հետագրում են «Berliner Tageblatt» լրագրին, որ փետրվարի 1-ին (13), թիւրքաց միւստիքների խորհրդի ժամանակ կրեւելից հետագիր ստացվեց այնտեղ կատարված անցքերի մասին, որը սարափելի տպաւորութիւն թողեց սուլթանի պալատում: Խորհրդի նիստը շատ ազդեկաց էր. բայց ամենահետաքրքրականն այն է, որ կիսապաշտօնական «Moniteur» լրագրում տպված է, թէ Կերեւէ կզգում կատարեալ հանգստութիւն է տիրում(!!!):

Խաղաղան «Secolo» լրագրին գրում են Կ. Պոլսից, որ թիւրքաց մեղիքներում ձեռքից ձեռք են անցնում պրօկլամացիաներ, որոնց մէջ խօսվում է սրբազան պատերազմ սկսելու մասին:

«Nord» լրագրի մէջ տպված է հետեւեալը. «Մի քանի գերմանական լրագիրներ այնչափ են, թէ Աւստրո-Վնգարիան պէտք է դրան: Մակեդոնիան Մենք մեր պարտքն ենք համարում միջինեղ այդ՝ Drong nach Osten» երազող հրապարակախօսներին, որ թիւրքիան ոչ միայն չէ քաղաքի զոյգութիւն ունենալուց, այլ թէ նրա զոյգութիւնը կատարելապէս կապահովվի Եւրոպայի կողմից, եթէ միայն Բ. Գառն հետին այն խորհուրդներին, որ նրան տալիս են մեծ պետութիւնները և իրագործի իրան առաջարկվող ընթացքները»:

«Frankfurter Zeitung» հաղորդում է, որ եւրօպական վեց մեծ պետութիւնների դեսպանների ձեռքով մշակված ընթացքների ծրագիրը ուղարկվել է կարելիսներին ի հաստատութիւն յունվարի 30-ին: Բ. Գառն մի առանձին արտաքար խորհուրդ է նշանակելու 150 անդամներից բաղկացած՝ այդ ծրագիրը ընկնելու համար, երբ կառավարվի իրան:

Կ. Պոլսից հետագրում են «Temps» լրագրին յունվարի 30-ին, «Վալաթիայի թագերից մէկում, հրէաների զարոգում, դուրսկը են ուղեւոր, որոնք իբր թէ գրված են եղել այնտեղ հայ ժառանգների ձեռքով, օսմանեան բանկի վրա եղած յարձակման ժամանակ»:

Կ. Պոլսից գրում են Եւրօպական լրագիրներին. «Հայերի մէջ յուզմունքը ստանկանում է և այդ պատճառով սուլթանը երկուդի մէջ է: Վերջին ժամանակներս հայերը նորից սկսեցին կայքներ պատերին յեղափոխական պրօկլամացիաներ: Հայոց պատրիարքարանի դարպասի վրա, Գառն-Գառն, և նորի իսկ Օրմանեան պատրիարքի բնակարանի դռների վրա նորերս կայքներ են բողբոջալու, որոնց մէջ յայտնված էր հայ ժողովրդի ղեկավարութիւնը թէ պատրիարքի և թէ նրա Վարձականը խորհրդականների դէմ: Նայն պիտի թղթեր կայքված են և քաղաքական ժո-

ՆԱՄԱԿ ԿԻՒԻԿԱՅԻՅ

Յունվարի 20-ին

Կիւիկիայի կաթողիկոսական խնդրը առանց օրինաւոր մի երկր յանգեւել կը չարունակէ այս կողմերը տակաւին մոբերը զբաղեցնել: Գաւաճան Գաղանձեանը յաղթականութեամբ ստացած կաթողիկոսական անունը պահելու համար՝ ամենավատ և անարգ միջոցների կը խոնարհի: Արդէն գիտէր, որ իր զոյգելի անունը յաջողած էր Կիւիկիայի քանի մը և մասնաւորապէս Առաջնայի եկեղեցեալ մէջ յիշատակել տալ կառավարութեան օժանդակութեամբ: Կեկուսներ ամայ վերջերը, որպէս զի նոր յաւելում մի ընէ իր արբանեկաց և գործակցաց վրա՝ Ֆրնուշի վնասնօր միջոցաւ Պոլսին փախչելով եկած Արշակ և Յարութիւն սարկաւազներն վարդապետ ձեռնադրել տալ կուզէ: Կեկուսները 28-ին այդ ձեռնադրութեան պատրաստութիւնը կը լինին: Առանայի ժողովրդեան մէջ յուզում մի կը տեսնվի: Այդ ձեռնադրութիւնը չը պիտի ըլլայ, կաղապակն շատերը: Գառնեանի անունը չը պիտի յիշատակվի, կը դաշեն ուրիշները: Արմուկ և վէճ կը շատայ. Առանայի մայր եկեղեցոյ բակի մէջ Նիկողոս եպիսկոպոսի սպասաւորի և առաջնորդարանի գրագրի մէջ աղմկալի բանակու մը տեղի կուենայ, Նիկողոս իր սպասաւորի կողմն բռնելով անսանձ լեզուով նախախնդ և հայոյթիւն կը տեղայ գրագրին, առաջնորդի և հայ ժողովրդի գլխուն, կը պոռչտայ, կը մեծաբանէ, կը զայրանայ, թէ ինչու ազգը իր և Գաղանձեանի անձնազօրութիւնը չը գնահատեր և այլն և այլն:

Հետեւեալ օրը, կիրակէ, դեկտեմբերի 29, ժողովուրդը, որ եպիսկոպոսի լուսանքները լուրով զայրացած և զրգուած էր, եկեղեցի կը խռովի: պատարագիչ քահանային (տէր-Վեռնը Տ. Սահակեան) լուր կը զրկվի, որ Գաղանձեանի անունը իբրեւ կաթողիկոս չը յիշատակվի: պատարագ ըսկսած է, խուռն բաղմունքներ կը շարունակէ մնալ յեկեղեցին: Ուրիշ օրերու սովորութեան պէս ոչ «Կիւքին» և ոչ «Առաքելոցին» ոչ որ զուրս կենէ: պատարագիչ քահանան վարանման մէջ է. մէկ կողմն ժողովուրդը կայ, միւս կողմն իշխանութեան բռնութիւնը: Տէր-Վեռնի վարանումը երկար չը տներ. յաղթանակը ժողովուրդին է: Գաղանձեանի անունն փոխարէն հանգուցեալ կաթողիկոսի անունը կը յիշատակվի: ամենքն ալ զօհ են, ժպիտ կայ ամենու երեսին:

Բայց տակաւին ընկել կայ. «Եւս առաւելն» վերջ եկեղեցին կիսովի կը դատարկվի. եկեղեցում «Տէր ոգրամեա» կերպեն. զուրս բակի մէջ անագին աղմուկ կը բարձրանայ, ձայները մինչև աւագ սեղանը կը հասնին. ինչ կայ արդեօք: Ժողովուրդը Ֆրնուշի ուխտադրած Նիկողոս եպիսկոպոսի վրա յարձակուել է, վրէժը կը լուծէ անոր տուած նախաւաւաց, իրաւամբ զայրացած են նրա յեղեցուկ բնաւորութեան, նրա ուխտադրութեան և դաւաճանութեան դէմ: Սակայն ոստիկանութիւնը չուով հասնելով զՆիկողոս կաղաւթ յարձակողներու կատաղութեանը, բնան երիտասարդներ կը ձեռքաւորակին իբր գլխաւոր հեղինակ խռովութեան, իսկ Նիկողոս եպիսկոպոսն, Կիրակոս վարդապետն և Պոլսէն եկող երկու սարկաւազներն հետեւեալ օրը ընդ հակողութեամբ Կ. Պոլսի կը դրկուին, և Գաղանձեանի անունը յայնմհետէ կը դադրի յիշատակվել իբր կաթողիկոս:

Տեսնելը թէ այս շիտաթիւններն վերջն ալ նոր պատրիարքն և վարչութիւնն անտարբեր պիտի մնան, եթէ ոչ պիտի փոխան աղբոջաւ եղանակաւ մը կարգադրել և լուծել այդ կարեւոր խնդիրը:

Ա.

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Մի տեսարան Թիֆլիսի դումայից («Кавказъ» լրագրի արձանագրութիւնից): Փետրվարի 7-ի նիստն է: Կիւքանութիւնները հակաժամտախտային միջոցների մասին են. ձառերը կրկնում են:

Չայնաւոր մ. արգանեան Եւս առաջարկում են որոշել, որ ամբողջ և խոնաւ նկուղները

